Հաստատում եմ՝ 16 հոկտեմբերի 2020 թ.

Հայ-Ռուսական համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Մերգելի

ԿԱՐԾԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ռուզաննա Էդվարդի Գևորգյանի «Տեքստի վերլուծության տեխնոլոգիաներն անգլերենի հումանիտար կողմնորոշման դասընթացներում» թեմայով ատենախոսության մասին

Հումանիտար կողմնորոշման անգլերենի դասընթացի շրջանակներում գեղարվեստական տեքստի շուրջ աշխատանքի կազմակերպումը անհրաժեշտություն է, քանի որ ուսանողը սովորում է ոչ միայն օտար լեզու կամ լեզուներ, այլև սովորում է ընթերցել օտարալեզու գրական տեքստեր և վերլուծել դրանք:

Մի կողմից, ուսանողները ծանոթ են դեռևս դպրոցից տեքստի բանասիրական վերլուծության տարրերին: Մյուս կողմից, նրանք պետք է կարողանան օտար լեզվով տեքստի լեզվաբանական, գրականագիտական, ոճաբանական վերլուծություն: Նրանք պետք է կարողանան որոշել ուսումնասիրվող տեքստի հիմնական գաղափարը, նրա հիմնախնդիրը, կատարել կառուցվածքային վերլուծություն և այլն: Դրա համար պահանջվում է զարգացնել ոչ միայն իր մասնագիտական, այլև հաղորդակցական

կոմպետենցիան: Նշված համատեքստում շեշտադրվում է նաև տեքստի ընտրության հիմնախնդիրը:

Հետազոտության նպատակը հստակ է: Խնդիր է դրվում մշակել օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգ:

Նա ուսումնասիրել է տեքստի վերլուծության տեխնոլոգիաների եռաստիճան համակարգ: Տեխնոլոգիաներ, որոնք վերաբերում են ընդհանրապես ուսուցմանը, տեքստի թարգմանության տեխնոլոգաիներ և բուն օտարալեզու տեքստի վերլուծության տեխնոլոգիաներ: Կարելի է առանձնացնել տեքստ վերլուծության ուսուցման անձնակողմնորոշիչ, անձնուղղորդ, նմանակման, ոչ խաղային և խաղային, հաղորդակցական ուսուցման, տարբերակված ուսուցման , ուսուցման մոդուլային, քննադատական մտածողության զարգացման ինչպես նաև տեքստի թարգմանության և վերլուծության (rule-based՝ կանոնների վրա հիմնված, statistics-based՝ վիճակագրական, model-based՝ կաղապարների վրա հիմնված) ժամանակակից տեխնոլոգիաները:

Հետազոտության տեական և գործնական նշանակությունը կասկած չի հարուցում:

Հետազոտության ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտն, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Առաջին գլխում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է անգլերենի հումանիտար կողմնորոշման բուհական դասընթացը, նրա նպատակը, խնդիրները, տեքստի նախաթարգմանական, ոճաբանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաները:

Նա վերլուծում է «գեղարվեստական տեքստ» հասկացությունը, նրա գործառույթները, ձևաբանական, շարահյուսական, հնչյունաբանական մակարդակներում:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ատենախոսը ներկայացնում տեքստի վերլուծության տեխնոլոգիաները և ընթացակարգերը, բացահայտում է վերլուծական ընթերցանության առանձնահատկությունները:

Առաջին երրորդ ենթագլխում ատենախոսը ներկայացնում է ոճաբանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաները:

Երկրորդ գլխում հեղինակը բացահայտում է վերլուծական ընթերցանության ուսուցման տեխնոլոգիաների մանկավարժական պայմանները, ցույց է տալիս իմաստաբանական-գծագրական դասակարգիչների կիրառման հնարավորությունները, հիմնավորում է տեքստի վերլուծության ուսուցման մոդելի արդյունավետությունը ուսուցամն բոլոր փուլերում:

«**Վերլուծական ընթերցանության ուսուցման տեխնոլոգիաները**» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է վերլուծական ընթերցանության գործընթացը ըստ փուլերի, ըստ շարահյուսական, ձևաբանական, բառային, իմաստային, ոճաբանական վերլուծության տեսակների:

Հետազոտության նորույթներից մեկն այն է, որ հեղինակը տեքստի վերլուծության ուսուցման տարբեր ռազմավարություններ է կիրառում, հստակորեն նշելով այս կամ այն գծագրական դասակարգիչների կիրառման նպատակահարմարությունը: Նրան հաջողվել է հստակորեն ներկայացնել փորձարարական ուսուցման գործիքակազմը, ընթացքը, նպատակը, փուլերը, ուսանողների համակազմը, ընթացակարգերը և արդյունքները: Փորձարարական ուսուցման նպատակն է եղել հիմնավորել առաջարկվող կաղապարի արդյունավետությունը: Փորձարարական ուսուցումն իրականացվել է ԵՊՀ լրագրության և բանասիրական ֆակուլտետներում:

Փորձարարական ուսուցման ավարտական փուլում ստուգվել են ուսանողների վերլուծական կարողությունները ըստ կիրառվող տեխնոլոգիաների:

Ատենախոսին հաջողվել է ցույց տալ, որ փորձարարական խմբում ընդգրկված ուսանողներն ավելի արդյունավետորեն են իրականացնում տարբեր հետազոտական, ստեղծագործական նախագծեր:

Ատենախոսության մեջ տեղ են գտել որոշ թերացումներ և վրիպումներ, որոնք կարելի է ուղղել հետագա ստեղծագործական գործունեության ընթացքում:

1. Ատենախոսը չի հստակեցնում, թե ինչ դերակատարություն ունի վերլուծական ընթերցանությունը և տեքստի վերլուծությունը:
2. Ատենախոսը կարող էր ներկայացնել այն դասագրքերը, որոնք պարունակում են տեքստի վերլուծության տարրեր:
3. Հետազոտության մեջ կարելի էր որոշ երույթներ ներկայացնել միայն հարերեն: Օրինակ՝ ռեֆլեքսիա, կոմպետենցիա, կոմպոզիցիա:
4. Որոշ տեղերում կան ոճական առումով սխալ ձևակերպված նախադասություններ՝ հատկապես ներածական մասում:

Կարելի է պնդել, որ **Ռուզաննա Էդվարդի Գևորգյանի՝ «Տեքստի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաներն անգլերենի հումանիտար կողմնորոշման դասընթացներում» խորագրով ԺԳ□ 00.02 «Դասավանդման և ուսուցման» / անգլերեն լեզու/** խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն, գիտական հետազոտություն է, ամբողջովին բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջները, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2020 թվականի հոկտեմբերի 16 - ին կայացած N 2 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության

ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.թ., Ա.Սայամյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Սիմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա.Ա. Սիմոնյան

Հաստատում եմ՝ 16 հոկտեմբերի 2020 թ.
Գիտքարտուղար,
բ.գ.թ. Ռ.Ս. Կամսաբաբովա